Նախասկիզբ 0 https://www.youtube.com/watch?v=-O9fazsBzkQ 11.50ից սկսել

Աշնան գույներ / միջոցառում / 1

1 https://www.youtube.com/watch?v=qTDkw86EOao լա վի

1.0 Նախաբան (Բա՜րև աշու՛ն, բարև կրկին, Իմ գունազարդ, թախծոտ ընկեր…

1. Աշո՛ւն, բազմերանգ ու բազմաբնույթ, խոր իմաստով լեցուն ու բազում գույներով ողողված տարվա եղանակ) // կից խոսքեր՝ սկիզբ …

1.1 Աշո՛ւն, դու հոգեթով սիրո մեղմակարոտ հուզում,

1.2 Աշո՛ւն, քնքուշ սեթևեթող քմայքներով նազուն օրորվում ես հանդարտ, հանդարտ խոկում. .

.

1.3 Աշո՛ւն, քո նրբաթև ուսին մեղմ արևն է ննջում, անափ կարոտներիդ հուզումներում հեռացումի ժպտուն հրաժեշտն է հնչում. . .

1.4 Աշո՛ւն, հմայքներիդ ոսկե թրթիռներում տաք խաշամն է շրշում, խշշում,ինչպես հոգում հնչող նուրբ մեղեդի՝ սիրով լեցուն. . .

1.5 Աշո՛ւն, քո ոսկեհյուս հեքիաթներում անանց սերն է թագավորում. . .

2 Աշնան առավոտի հետ բացում ես աչքերդ, և հոգումդ ծնվում է մի չգրված, չերգված, թվում է՝ երբևէ չասված մի խոսք: Բացվող օրվա կապույտը հեռու սարերում խառնվել է աղբյուրների ջրերին, և ակունքներից կապույտ է հորդում, երկնքից կապույտ է թափվում, և կապույտ է լցվում Հայաստան աշխարհի վրա՝ քարին ու ծաղկին, սարին ու դաշտերին: Քարը խաչքար է դառնում՝ ասեղնագործ, լուսե պատկերներով և կախվում քարափներից, Հայաստան աշխարհի երկնակամարից…

3 Հայոց լեռնաշխարհում նորից աշուն է՝ ոսկեհեր, դեղնաթախիծ աշուն: Աշուն, որն իր հետ բերեց մեր հայրենիքի անկախությունը: Որքան էինք սպասել այս օրվան, երազել: Կորցրել էինք, գտել, նորից կորցրել, ու դարերով բացված երակի նման հոսել է Արաքսը, ամեն տարվա հետ բուժելով ու բացելով մեր ժողովրդին բնորոշ հոգեբանական նորանոր ծալքեր:

4 Ու նորից աշուն՝ սեպտեմբերի 27, 2020թ. ցավ ու կորուստ սփռելով հայի աչքերում, հազար ու մի զրկանք, վիշտ զգալով, որ Եռագույնի ծփանքում փողփողացող գույները նաև ունեն արյան համն ու գույնը…

5 Եվ հայը գտավ կռվի իր ճանապարհը՝ մեր հայացքը զցում ենք մեր հոգու խորքը, մեր հոգու երկիրը, մեր հոգու սահմանները, որտեղ կանգնած է հայոց բանակի Զինվորը՝ մեր հայրենիքի պահապանը…

6 Նորից եկավ աշուն՝ սեպտեմբերի 13, 2022թ., մի՞թե կարելի է հավատալ… հայ զավակը նորից իր արյամբ ու սխրանքով պահեց իր հողը:

7 Հիշում եմ ,,, Աշուն էր…2020թ ի արյունոտ ու ցավոտ աշունը..Օդը տնքում է ողբի ծանրությունից, երկինքից անվերջ թախիծ է ծորում,մարդկանց դեմքին իր անջնջելի կնիքն է դաջել նորին մեծություն՝ ցավը, որ էլ երբե'ք,ոչ մի ջնջոցով ջնջել չի' լինելու…

8 Շուրջս ծաղկած շիրիմների անվերջանալի,սկիզբն ու վերջը չերևացող քառուղի է…կիսատ ու անկատար երազանքներ…սառած ժպիտներ,որ հավերժ մնացին 20 տարեկան…քամուց ծածանվող սև ժապավեններ…շնչահեղձ անող դառը իրականություն,որ տեսնում,գիտակցում,բայց հրաժարվում եմ ընդունել…

9 Հոգեկռիվ է…մտքերս իրար են խառնվել, ախր ազգիս սերուցքն են քաշել մարդիկ…ախր հերոսներիս արյունն են պղծել…ո՞նց ենք ապրելու էս արյան ծովում ժողովուրդ…ո՞նց ենք նայելու մեր խղճին ու խեստովանենք,որ դավաճանեցինք մեր սուրբ սերնդին…
կներեք մեր Հերոս տղերք…

10 Աշուն է…թաց ու թախծոտ,կարմիր աշուն…Երկնքում ճերմակին տվող աղավնիների անվերջանալի շարան է…թևում են տղերքը երկնի կիսակարմիր հեռուներում,թևում դեպի՝ Անմահություն…Կներեք մեզ մեր Թանկ եղբայրներ…

11 Մի բուռ աշուն բերեք, որ գոնե աշնան վերջին օրերը վայելենք աշունը ու հասկանանք, որ այս տաք ամռանից հետո միանգամից ձմեռ չեկավ: 2020թ մեր աշունը գողացան մեզնից, չթողեցին վայելենք այնպես, ինչպես միշտ էինք անում՝ դուրս էինք գնում բակ ուրախանալու ծառից թափվող չորացած տերևներով, դուրս էինք գնում զբոսանքի, որովհետև շուտով եղանակները ցրտելու էին և ավելի քիչ էինք տնից դուրս գալու…

12 Ստիպեցին տառապել, տանջվել, լացել և դառնալ սգավոր: Խնդրում եմ մի բուռ աշուն բերեք, որ գոնե վերջին օրերին հասկանանք, որ 2020թ աշունը երեք ամսից չէր կազմված, որ այդ աշուն չուրախանանք ծառից թափվող տերևները հաշվելով, այլ սգացինք անմահացած Տղաների անունները կարդալով…
Խնդրում եմ…աշուն

2 https://www.youtube.com/watch?v=GZ3H6BM68cI հոկտեմբեր

13 - ***Ուշ աշնան երգը***

Չվող թռչուններն անցան գնացին
Պարան առ պարան,
Շարան առ շարան անցան գնացին:
Ականջների մեջ
Վերջին որոտի կանչերը տարան

Ու վերջին կանաչ-կարմիրը տարան
Իրենց թևերին:
Աչքերում իրենց թափուր մնացած
Բույն-օջախների պատկերը տխուր
Եվ կտուցներին՝ իրենց թափառիկ,
Անգուշակելի ծիվ-ծիվը տարան:
Չվող թռչուններն անցան գնացին
Շարան առ շարան…
Մնացողները կծիկեն դառնում
Թրջվելու վախից
Եվ կամաց-կամաց բներն են քաշվում:
Ծառերը մրսած մատների վրա
Իրենց քրքրված ստվեր-կմախքի
Կողերն են հաշվում:
Մի ուշքը շաղված շնչահատ քամի,
Շուրթերի վրա
Խոնավ շրշյունը խազալ-խաշամի,
Սատանան գիտի թե ո՞ւր է տանում:
Ցուրտ է, կմեռնի մամուռն անտառում:

3 https://www.youtube.com/watch?v=MVPTkODX8Xc երդում

14 Աշուն դու մեզնից նեղացած մնացիր, մենք էլ քեզանից ենք նեղացած։
Ոչ մեկը չնկատեց ինչպես եկար, երբ գնացիր։
Երփնաթույր տերևներդ աննկատ ու անխնա տրորելով անցանք, որովհետև կյանքն էլ մեզ տրորեց։
Չնկատեցինք՝ ինչպես տերևաթափ եղար, որովհետև քեզնից ոչ պակաս ջահելաթափ ու հուսաթափ էլ մենք եղանք։
Այս տարի անգամ չնկատեցինք, որ քիչ էին անձրևները. մեր արցունքները տեղը հանեցին։
Այս տարի համեմատաբար տաք էիր, բայց մենք ամենաշատը մրսեցինք՝ սիրելիների բացակայող ջերմությունից ու ամենաշատը դողացինք նրանց անունը ցուցակների մեջ փնտրելիս։
Այս անգամ <<Ոսկե աշուն>> ու <<Սիրո աշուն>> անելու սիրտ էլ չմնաց, որովհետև շատերի համար դարձար սիրո վերջին աշունը։
Իսկ ոսկեգույնդ բաժին հասավ այն տողերքին՝ ում անունները ոսկետառ կգրի պատմությունը։
Աշուն այս տարի մենք էլ աշունացանք ու գուցե կյանքում առաջին անգամ հասկացանք՝ ինչքան դժվար է լինել աշուն, մերկանալ հույսերից ու նայել մահվան աչքերին։
Աշո՛ւն, դու մեզ բարեբեր ու խաղաղ աշուն ես պարտք, մենք քեզ՝ սիրո ու հույսի ոսկեգույն երազ.

/*Մինչև այստեղ այս երաժշտությունը/*

4 https://www.youtube.com/watch?v=qliyuo2UuWY 18 տարեկան

15 Խնդրում եմ աշո՛ւն ,քանի եկել ես,
Հայոց հողերի արյունը սրբի՛ր,
Քանի եկել ես, քո տերևներով,
Նահատակ հողը կրկին համբույրի՛ր։

Խնդրում եմ աշո՛ւն, քանի եկել ես,
Հեռու ձորերից խավարներ մոլեգնիր,
Ասա որտեղ է որդուն կորցրել

Որտեղ որոնի իր սրտի դողը։

Խնդրում եմ աշո՛ւն քանի եկել ես,
Մեր հայրենիքի արևը ե՛տ բեր,
Մենք առաց արև ապրելը թողել,
ՈՒ դեռ ցավում ենք քո հին օրերը
Աշո՛ւն քանի եկել ես ,հողմերին ասա, թո՛ղ շատ չաղմկեն,
Հազա՜ր հազարնե՜ր հողը պինդ գրկել ու ցավից հոգնած հանդարտվել ճամփին։

Խնդրում եմ աշո՛ւն քանի եկել ես, խո՛սք տուր, որ երբեք էլ չես վայրագի
Ասա, որ ոչ մի կնոջ աչքերից, արցունքի կաթիլ դու էլ չես բերի՛։

(Միկա- զենք Գեղամ- Դրոշ պար քոչարի)

5 https://www.youtube.com/watch?v=iiEKvzM6dms մոցարտ

16 ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ-ԱՇՆԱՆ ՄԵՂԵԴԻ
Աշուն է, անձրև… Ստվերներն անձև
Դողում են դանդաղ… Պաղ, միապաղաղ
Անձրև՜ ու անձրև՜…
Սիրտը տանջում է ինչ-որ անուրախ
Անհանգստություն…
Սպասի՛ր, լսի՛ր. ես չեմ կամենում
Անցած լույսերից, անցած հույզերից
Տառապել կրկին.
Նայի՛ր, ա՜խ, նայի՜ր՝ ցավում է նորից
Իմ հիվանդ հոգին…

17 Անձրև է, աշուն… Ինչու՞ ես հիշում,
Հեռացա՛ծ ընկեր, մոռացա՛ծ ընկեր,
Ինչու՞ ես հիշում.
Դու այնտեղ էիր՝ այն աղմկահար
Կյանքի մշուշում…
Դու կյա՛նք ես տեսել, դու կյա՛նք ես հիիշում-
Ոսկե տեսիլնե՜ր, անուրջների լու՜յս…

Իմ հոգու համար չրկա արշալույս.

6. https://www.youtube.com/watch?v=GZ3H6BM68cI հոկտեմբեր

18 Աշուն… Հոկտեմբերը զգույ՜շ փակում է դուռը։ Պատուհանը բաց է. նրանից անդին դեռ գույները տաք են, ու թռչնակը դեռ մեղեդի է հյուսում կիսամերկ ճյուղին։ Նա չգիտի, թե ինչ սառն են նիրհում նոյեմբերի գիշերները։ Լսու՞մ ես կարոտի ձայնը… Մի տերև լուռ արտասվում է։

19 Աշուն է հիմա , ու՜շ աշուն ՝ նոյեմբեր : Աշո՛ւն, ինչպե՞ս ասեմ ասելիքս, ինչպես այսքանից հետո խոսեմ քո գունագեղության մասին, քո հմայքի , քո առատության : Աշո՛ւն, յուրաքնչյուր ոք սիրում է քեզ , բայց նեղվում ու չի կարողանում արտահայտվել, պիտի՛ խոսենք , քանզի հայն արարել է , ստեղծել , մաքառել , աշնանային բերքն ու բարիքը՝ իր աշխատանքի արդյունքը, տուն է բերել, հիմք է գցել՝ տուն կառուցել, շենացրել հայրենիքը , սիրել ու աշխարհին ցուցադրել իր երկիրը, իր արվեստը, իր մշակույթն ու իր լեզուն: Հայի հույսը չի մարի, հայը կստեղծի նոր գույներ և կպարուրվի այդ գույների մեջ:

20 Աշուն ՝ թախծոտ, արևավառ, թաց ու լուսավոր , բաիք բերող ու հուսադրող:

Աշունը ձորն է մտնում

Աշունը ձորն է մտնում
Ձորերի միջով:

Մաշված, քաշված մի աշուն,
Վիթխարի մի ձոր…

Ճերմակ նախշեր է քաշում
Ցուրտը մի թևից,
Նայում են ու հառաչում
Աշնան ետևից:

Քո ջրերը հստակված,
Սարերը քո չոր,
Քո ամպերը նստակյաց,
Քարերը քոչվոր

21 Աշուն եկավ ալ կապած,
Ոսկենակար շալ կապած,
Մրգով լցրած ծոց ու բուռ,
Եկավ, ընկավ դռնեդուռ...
Արև բացվեց երկնքում,
Ամպերն ուրախ են, ժպտում,
Հույս են տալիս միշտ հային,
Ապրել ընդմիշտ իր հողում,
Սերմը գցել, աճեցնել,
Բերք բարիքը տուն տանել:

(**Բացել պատի արևը, կապույտ ամպը պար ուրախ**)

https://www.youtube.com/watch?v=iiEKvzM6dms մոցարտ չէ

https://www.youtube.com/watch?v=cZY89RJOGTc վալս դաժդյա

22 Աշունն իր կախարդական վրձնով ներկել է անտառները: Տոթ ամռան շոգը արդեն հիշողություն է դարձել:Երկինքն ավելի ու ավելի հաճախ է պատվում ամպերով:Բայց այս ամենի հետ մեկտեղ պտուղների ծանրությունից կռացել են բերքատու ծառերի ճյուղերը: Այգիներում եռուզեռ է:Այգեգործներն իրենց քրտնաջան արդյունքը արևավառ հայաստանի արևահամ միրգն են հավաքում:Ասում են աշխարհին ամենահամեղ մրգերը դեղձը,ծիրանն ու խաղողը հայաստանն է նվիրել:Ասում են մեզ ծնկի բերելու համար մեր թշնամիները մեր այգիներն են ոչնչացրել:
Մենք էլ, ի հեճուկս թշնամու,շարունակել ու շարունակելու ենք այգիներ տնկել:Եվ ամեն տարի աշնանը զարմացնելու ենք մեր ոսկեհատ խաղողով, դեղձան թավշե դեղձով,մեղրահամ տանձով, խնձորով, սարոլով:

23 Աշուն է, ոսկի աշուն: Շուրջդ հեքիաթային աշխարհ է: Բնությունն իր հրաշք վրձնով դաշտ ու անտառ, այգի ու սար ներկել է ոսկի, դեղին, վառ ծիրանի գույներով: Դասասենյակի մի անկյունը նման էր աշնան այգու մի կտորի: Քամուց տերևները պարում էին վերջին պարը: Առատ միրգն ու բանջարեղենը ամբողջացնում էին աշնան ներկապնակը:

ՄՐԳԵՐԻ ԶԱՄԲՅՈՒՂ

6.0 https://www.youtube.com/watch?v=n0_M-MfrVTQ հայկական

Կամ **7** https://www.youtube.com/watch?v=NU8a90heB1M սիրում եմ քեզ, տարիներ

կամ https://www.youtube.com/watch?v=BuHvAXcU9ZE երևի սա

24 Ինչքան գեղեցիկ, կախարդական, հոգուն հարազատ, մեկիս համար մութ ու գորշ, մյուսի համար գույնզգույն և վառ է աշունը: Այդ ժամանակ բոլոր տերևները կարմրում, դեղնում են, փողոցները դատարկվում են, ամենուրեք մեղմ զեփյուռն է փչում և ծառի տերևները մեղմիկ օրորվելով ընկնում են ցած: Սիրում եմ աշունը, որովհետև նրա գույները նման են իմ հոգու գույներին, նրա երգը հարազատ է իմ սրտին: Ամեն անգամ երբ նայում եմ պատուհանից դուրս, հասկանում եմ թե Աստված ինչ հրաշք նկարիչ է , որ այսպիսի տեսարան, այսպիսի աշուն է պարգևել մեզ: Երբ քայլում էս ինչ որ անտառում, որտեղ ամեն ինչ պատված է ոսկեզօծ տերևներով, հասկանում էս որ նման հիանալի տեսարան չկա աշխարհում… Աշնան երգի հնչյունները համահունչ են իմ երազանքներին: Նրա երգը կախարդում է իմ կյանքը: Ինչքան հրաշալի բառերով կարելի է բնութագրել Աշունը… Սիրում եմ կարդալ մեր մեծն բանաստեղծների չնաշխարհիկ բանաստեղծությունները: Այնքան պարզ, հասկանալի ու այնքան դյութիչ խոսքերով է նկարագրված , որ անհնար է անտարբեր անցնել բանաստեղծության կողքով: Անհնար է չսուզվել բառերի մեջ:

25 Աշունը տարվա պայծառ ու հիասքանչ ժամանակաշրջանն է: Նկարիչները հիանում էին նրա գեղեցկությամբ, բանաստեղծները գրում էին նրա շքեղության մասին, և շատերը խոսում էին նրա գրավիչ մոգության մասին: Աշունը ոչ միայն անձրև է, խոնավություն և ցուրտ, այն նաև գույների խռովություն է, պայծառ հովանոցներ, սունկի համար անտառում արշավ և ընտանիքի հետ հարմարավետ ու տաք երեկոներ: Ես առաջարկում եմ վայելել տաղանդավոր նկարիչների աշխատանքը, ովքեր իրենց կտավների վրա ցույց կտան ձեզ ոսկե աշնան ողջ գեղեցկությունն ու խորհուրդը:

8 https://www.youtube.com/watch?v=NU8a90heB1M սիրում եմ քեզ, տարիներ

26 Ծերանում է աշունը, փակելով է իր աչքերը. Պետք է հրաժեշտ տանք աշնանը .և հույս ունենալով, որ այլևս չենք ունենա աշնանային դժբախտ օրեր:

Աշուն

27 Մշուշների շղարշի տակ
Աշնան խաշամն է խշշում,

Քամու ձեռքերն անհամարձակ
Ամպի փեշերն են քաշքշում:
Ամպը լեզուն կուլ է տվել
Հնար չունի որոտալու,
Ցերեկն էլ է ցրտից կծկվել,
Չէ, երևի ձյուն է գալու:

28 Աշուն… Սիրում եմ աշունը՝ իր բոլոր գույների բազմազանությամբ ու անձրևներով, որոնք կարծես թե պատմում են աշնան հեքիաթը: Աշնանը բնությունը իր զարմանահրաշ գույները տարածում է ամենուր: Տերևները ծառերին կախարդական գույներ են ստանում և փորձում դիմակայել ուժգին քամիներին: Տերևները մրսում են, դողում ծառի ճյուղերին: Երբեմն էլ պոկվում են ու հեզաճկուն պարով իջնում գետին: Սիրում եմ ընկած գույնզգույն տերևների ձայնը, երբ քայլում եմ դրանց վրայով: Նույնիսկ մայթերն են ծածկվում երփներանգ գույներով: Սիրում եմ ոսկեգույն ու երբեմն էլ թախծոտ աշունը:

29 Աշուն է՝ տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, աշնան զեփյուռով, որ ծառերի ճղներից պոկում է դեղնած տերևները: Աշուն՝ հոգու ծաղիկ, ապրեցնող, և կախարդող հրաշագործ:
Աշուն սիրում եմ քեզ, սիրում եմ քեզ, քո բոլոր գույներով:
Աշունը դա երկրորդ գարուն է, երբ ամեն մի տերև ծաղիկ է:

30 Աշունը յուրահատուկ է իր բոլոր երանգներով: Աշնանը գետնին թափված դեղնականաչ, չոր տերևների վրայով քայլելիս ասես լինես հեքիաթում:Աշնանը ամեն բան գեղեցիկ է և կախարդական:
Աշնանային օր է, դառնաշունչ քամի էր,ամենուրեք մրսած և դեղնականաչ ծառերից տերևները պարելով իջնում էին ներքև:Ոսկեզոծ աշուն է: Երեկոյան քայլելիս չոր տերևների վրայով լսում էի այդ հաճելի ձայնը և տեսնում, թե սառած ծառի վերջին տերևը ինչպես է պայքարում քամու դեմ, որպեսզի չպոկվի և չընկնի, և արդեն զգացվում էր ձմռան շունչը:

Աշուն

31 Աշնան օրերն են հասել,
Իջել է ամպը սարին,
Եւ հրաժեշտ է ասել,
Կռունկը մեր աշխարհին:
Բարդին էլ չի սոսափում
Արագիլի թեւի տակ,
Դեղին թերթեր է թափում
Առվակի մեջ կապուտակ:

Կարմիր խարույկ է կարծես
Ծեր տանձենին անտառի,
Թվում է, թե մոտ վազես,
Ձեռք ու ոտքդ կվառի…

Քամին շատ էր թափառել,
Պարապ-սարապ թեւը կախ,
Բայց արդեն գործ է ճարել,
Տեսեք ինչքան է ուրախ:

32 Աշնան մասին բոլոր բանաստեղծություններն էլ միանման են, բայց սա տարբերվում է իր պարզությամբ: Ամեն գրող փորձում է աշնան մասին բանաստեղծությունն մեջ ներմուծել ինչ-որ անձնական իմաստ, որն իր հաշվին նույնպես գեղեցիկ է:

https://www.youtube.com/watch?v=-O9fazsBzkQ

32.1 Աշնան ոսկեփայլ երանգների մեջ
Դողում է մենակ տերևը դեղին,
Կախվել է ծառից վերջին հույսի պես,
Եվ օրորում է նրան մեղմ քամին:

Փոքրիկ տերևը՝ հուսալով թաքուն,
Աչքը հառել է չքնաղ արևին,
Ու ձգտում է վեր, նայում է երկինք՝
Ամու՞ր փարվելով հաստաբուն ծառին:

Իսկ ընկերները՝ այնքա՞ն հեշտությամբ
Պարելով իջել, բազմել են հողին,
Խշխշում են խենթ պուրակում փոքրիկ՝
Երգելով կրկին աշնան երգը հին:

32.2

Այս մի տերևը հեզի՞կ շորորում,
Աղերսում է բիրտ քամուն կատաղի,
Որ նա հեռանա հեզասահ ու մեղմ,
Որ իր մայր ծառից իրեն չանջատի:

Վերջին տերևը ծուրուրաց ներքև,
Ասես արցունքի վերջին մի կաթիլ,
Անկում կատարեց անձայն ու անթև,
Ինչպես ձյան բուքում ձյան սպիտակ փաթիլ:

Խառնվեց նրանց՝ իր նմաններին,
Խշշաց անցորդի անխիղճ ոտքի տակ,
Իսկ մայր-ծառը խողճ՝ մերկ ու ցրտահար,
Մինչ հաջորդ գարուն մնաց միայնակ…

8 https://www.youtube.com/watch?v=MVPTkODX8Xc երդում

33 Քամին երգում է իր երգը: Տերևները պարում են , ծառերի ճուղերը ուրախ խաղում արևի շողերի հետ, աշխարհքը պատվել է մի ոսկեզօծ ծածկոցով: Փողոցով քայլելիս լսում ես տերևների խշշոցը ու հասկանում, որ աշուն է, լսում ես ծառերի ճուղերին նստած թռչունների ու քամու երգն ու սկսում երազել: Պատուհանից նայելիս կարծես մի հին հեքիաթի գիրք թերթես, կարծես լինես մի հեքիաթային մոլորակում, որտեղ ապրում են հեքիաթի բոլոր հերոսները, որտեղ կան երազանքներ և որտեղ միշտ աշուն է: Ոսկեզօծ տերևները ծածկել են աշխարհքն իրենց գույներով, և մարդկանց ոգեշնչում են ստեղծագործել, մոռանալ առօրյա հոգսերի մասին և մի պահ ապրել աշնանային հեքիաթում, որտեղ միշտ ուրախ է, միշտ պայծառ ու գեղեցիկ:

34 Դալկացող գեղեցկուհին՝ աշունը, ի ցույց է դրել իր ողջ հմայքն ու գեղեցկությունը, իմաստությունն ու քնքշանքը: Նա քամու հետ ծափ է զարկում,տերևների հետ պար բռնում,ապա հեզանում ու հառաչում, լռությամբ ու թախիծով լցվում հոգուդ մեջ,զարդարում այն ներկապնակի ամենավառ գույներով: Ի՞նչ է ուզում աշունը,ինչու՞ է այսպես հմայում՝ մահվան պես դաժան ու կյանքի պես դյութող,մահվան պես վեհաշուք ու կյանքի պես տենչալի... Մի' գնա աշուն,մնա ինձ հետ:Ես սիրում եմ քեզ,դու հոգեհարազատ ես ինձ,իմ քնքշաշրշուն,սիրած աշուն:

35. 1 Դու լու՛ռ ես, աշու՛ն...
Ձյան հոտ է գալիս,
Ընկրկում ես լու՛ռ, աշուն,
Նու՛րբ ճերմակին էխայտալով տալիս
Մի ո՛ղջ բնություն...
Ընկրկում ես լու՛ռ, աշու՛ն...
Քամին անխնա թևին հավաքում,
Տանում է գորգդ՝
Հյուսված ոսկեթել երազանքներից,
Հետքերդ է մաքրում երկրիս երեսից
Այդ անգութ քամին, աշու՛ն,
Քո՛ երազներն է իր թևին տանում,
Դու լուռ ես, աշու՛ն,
Դու լու՛ռ ես, աշու՛ն…

35.2 Հարմարվի՛ր ինձ հետ, սիրելի ‘ աշուն,
Բավ է ես թախծեմ արցունքներիդ տակ,
Պարուրվի՛ր վարար ծիծաղով անհուն,
Լցրո՛ւ օրերդ սիրով անհատակ:
Եվ թող թավ գորգիդ շրշյունի ներքո
Քայլեն երջանիկ սիրողները խենթ,
Թող տեսնեմ դեմքեր լիացած ու գոհ,
Թող զույգեր կազմեն ջահելները կենտ:

35.3 Թող անձրևիդ կաթիլներն առատ
Մարդիկ ընդունեն որպես լիություն.
Եվ թող չփնտրեն նրանցում անպարտ
Կյանքի բովի մեջ անանց տխրություն:
Դե, բավ է թախծես, սիրելի՛ աշուն,
Թող մարդիկ քեզ հետ լու~ռ երջանկանան,
Դարձիր ինձ նման սիրով առլեցուն,
Բաշխիր ամենքին սեր անանձնական…

35 Վերցրեց աշունն ի՛ր վրձինը կախարդական,
Ու նկարեց հեքիաթային մի երազանք...
Նկարեց նա՝ արևավա՛ռ, արևաշո՛ղ մի լուսաբաց,
Բազմահազար ու գույնզգույն ծաղիկների
Բույրով օծված .....
Ներկեց շուրջը կախարդական իր վրձինով՝
Միա՛յն սիրո ու ջերմության վառ գույներով...
Թո՛ղ որ աշնան կախարդական այս վրձինը,
Իր գույներով ներկի նաև ձեր՛ ապագան,
Որ մի՛շտ լինի սեր, ջերմությո՛ւն
Ու ժպիտներ՝ սիրուց ծնված...
Ցանկանում եմ ձե՛զ բոլորիդ
Աշնան բազում ու երփներանգ գույների պես
Կախարդական մի մե՛ծ աշխարհ,
Որ մի՛շտ լինի սեր, ջերմություն,
Ե՛վ անսահման երջանկություն՝
Աշնանային գույնով օծված...

Ամփոփում՝ սլայդ 2

https://www.youtube.com/watch?v=CHUjnzH3LTo աշխույժ
https://www.youtube.com/watch?v=iDS2Oslf1_4 լավ
https://www.youtube.com/watch?v=BuHvAXcU9ZE